

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 3/8

Տասնյոթը դեկտեմբերի 2012 թվականի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի անվտանգային հետազոտությունների կենտրոնի կանոնադրությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է
ԵՊՀ Գիտական Խորհրդի
2012թ. դեկտեմբերի 17ի թիվ 3 նիստում
ԵՊՀ Գիտական խորհրդի նախագահ,
Ա. Հ. Միմոնյան
17/12/2012թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Անվտանգային հետազոտությունների կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Կենտրոնը գործում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ԵՊՀ կանոնադրության ու սույն կանոնադրության հիման վրա:
3. Կենտրոնն ունի սեփական անվանումով կնիք, դրոշմակնիք և անհատականացման այլ միջոցներ:
4. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումներն, ինչպես նաև Կենտրոնի վերակազմակերպումը կամ լուծարումը իրականացվում են ԵՊՀ ռեկտորի ներկայացմամբ՝ ԵՊՀ Գիտական խորհրդի որոշմամբ:

II. ԿԵՆՏՐՈՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Կենտրոնի խնդիրներն են.

ա) անվտանգային ոլորտում ներգրավված անձանց և պետական պաշտոնյաների մասնագիտական վերապատրաստման ծրագրերի իրականացումը,

բ) ՀՀ-ում անվտանգային հետազոտությունների ոլորտում ուսումնասիրությունների իրականացումը, ծրագրերի, գրականության և այլ ուսումնաօժանդակ նյութերի պատրաստումն ու հրատարակումը,

գ) ՀՀ՝ տարբեր պետությունների և կազմակերպությունների հետ անվտանգային ոլորտում համագործակցության ծավալման գործընթացի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի հետազոտումը և բարձրացումը:

6. Կենտրոնի գործառույթներն են.

ա) Կազմակերպել և իրականացնել անվտանգային ոլորտին վերաբերող տեսական և գործնական բնույթի հետազոտություններ,

- բ) Իրականացնել մասնագիտական խորհրդատվական գործունեություն,
- գ) Իրականացնել ՀՀ կողմից անվտանգային ոլորտում ներգրավված անձանց վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրեր,
- դ) Կազմակերպել գիտաժողովներ, սեմինարներ, կլոր սեղաններ, հեռուստառադիո հաղորդումներ, հանրային քննարկումներ և այլ միջոցառումներ,
- ե) Կանոնադրությամբ Կենտրոնի առջև դրված խնդիրների ու նպատակների առավել արդյունավետ իրականացման նպատակով համագործակցություն հաստատել ՀՀ-ում և դրա սահմաններից դուրս գործող շահագրգիռ կազմակերպությունների, պետական մարմինների և ֆիզիկական անձանց հետ, իրականացնել համատեղ ծրագրեր,
- զ) Շահագրգիռ կազմակերպությունների պատվերով իրականացնել անվտանգության ոլորտում ՀՀ-ի գործընկեր երկրների և կազմակերպությունների միջև կնքված ռազմավարական փաստաթղթերի, հայեցակարգերի և այլ փաստաթղթերի ոչ պաշտոնական թարգմանություն և հանդես գալ դրանց մեկնաբանություններով:
- է) Կենտրոնը նաև կարող է իրականացնել իր կանոնադրական նպատակներից բխող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործառնություններ:

III. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

7. Կենտրոնի կառավարման և կառուցվածքի հիմունքները

- ա) Կենտրոնի կառավարումը իրականացվում է ՀՀ օրենսդրությանը, ԵՊՀ կանոնադրությանը և Կենտրոնի կանոնադրությանը համապատասխան:
- բ) Կենտրոնի կառավարումը իրականացվում է Կենտրոնի տնօրենի կողմից:
- գ) Կենտրոնի կառուցվածքում կարող են գործել գիտահետազոտական, գիտակրթական բաժիններ, էլեկտրոնային ռեսուրսային կենտրոն, մասնագիտական գրադարան և այլ ստորաբաժանումներ:

8. Կենտրոնի տնօրենը

- ա) Կենտրոնի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է կենտրոնի տնօրենը՝ իր իրավասությունների սահմաններում և Կենտրոնի կանոնադրությանը համապատասխան:
- բ) Կենտրոնի տնօրենը նշանակվում է ԵՊՀ ռեկտորի կողմից:
- գ) Տնօրենը կարող է ունենալ տեղակալ, որին տնօրենի ներկայացմամբ նշանակում և ազատում է ԵՊՀ ռեկտորը:
- դ) Կենտրոնի տնօրենին նրա բացակայության ժամանակ փոխարինում է Կենտրոնի տնօրենի տեղակալը, իսկ վերջինիս կողմից տնօրենին փոխարինելու անհնարինության դեպքում՝ Կենտրոնի տնօրենի հանձնարարությամբ՝ Կենտրոնի աշխատակիցներից որևէ մեկը:
- ե) Կենտրոնի տնօրենը՝
 - 1) կազմակերպում և վերահսկում է Կենտրոնի գործունեությունը գիտահետազոտական, միջազգային և այլ ոլորտներում,

- 2) ԵՊՀ ռեկտորի հաստատմանն է ներկայացնում Կենտրոնի տեղակալի և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների թեկնածուներին,
- 3) տնօրինում է Կենտրոնին հատկացված ֆինանսական միջոցները,
- 4) կազմակերպում և իրականացնում է դասագրքերի, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկների նախապատրաստման ընդհանուր ղեկավարումը,
- 5) ամենամյա հաշվետվություն է ներկայացնում ԵՊՀ գիտական խորհրդին,
- 6) լուծում է կենտրոնի կանոնադրությունից բխող և կենտրոնի գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր,
- 7) արձակում է հրամաններ, տալիս է հրահանգներ, որոնք պարտադիր են կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումների, աշխատակիցների համար,
- 8) ներկայացնում է կենտրոնը ներհամալսարանական և արտահամալսարանական հարաբերություններում, կենտրոնի անունից հանդես է գալիս պետական մարմիններում և այլ կազմակերպություններում:

IV. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

9. Կենտրոնի գույքի, այդ թվում՝ ֆինանսական միջոցների ձևավորման աղբյուրներն են՝

- ա) Կենտրոնին ԵՊՀ-ի կողմից օգտագործման իրավունքով հանձնված գույքը.
- բ) Կենտրոնի կողմից իրականացվող մասնագետների որակավորման և վերապատրաստման ծրագրերի շրջանակներում մասնակիցների կողմից վճարվող վարձավճարները,
- գ) ՀՀ պետական բյուջեից պետական պատվերի շրջանակում կամ այլ նպատակով (եղանակով) հատկացված միջոցները,
- դ) ՀՀ և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումները, նվիրված և կտակված գույքը, դրամաշնորհները,
- ե) Կենտրոնի գործունեության արդյունք համարվող մտավոր և ստեղծագործական արտադրանքի վաճառքից գոյացող միջոցները,
- զ) Այն միջոցները, որոնք գոյանում են Կենտրոնին թույլատրված գործունեության տեսակներից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից: